Կենցաղային աղբի տեղափոխման համար չափը սահմանելիս «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված տարբերակներից ընտրվել է բնակվող բնակչի հաշվով վճարի գանձման տարբերակը, իսկ վճարի չափը առաջարկվել է սահմանել ներկայումս բնակչության կողմից վճարվող չափով՝ 1 բնակչի հաշվով ամսական 200 դրամ, ինչը հնարավորություն կտա առանց լրացուցիչ բեռ առաջացնելու օրենքի կիրառման արդյունքում ապահովել ամբողջական հավաքագրում և վերահսկողություն՝ դրանով իսկ ապահովելով ծառայության մատուցման համար բավարար եկամուտներ: Փաստացի բնակչության թվաքանակի հաշվարկը կատարելիս հիմք են ընդունվել Ազգային վիճակագրական ծառայության մարդահամարի տվյալները՝ առկա բնակչության թվի վերաբերյալ՝ նվազեցրած 20%-ով, ինչն էլ համարվել է կիրառման առաջին տարվա համար իրատեսական ցուցանիշ (ցանկը կցվում է):

Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի տեղափոխման վճարի առաջարկվող դրույքաչափը հաշվարկելիս հիմք է ընդունվել ինչպես գործող կազմակերպությունների կողմից փաստացի կատարվող աշխատանքների

ինքնարժեքի հաշվարկները, այնպես էլ նախատեսվող որակական փոփոխությունները: Հաշվարկվել են ոչ բնակելի՝ հասարակական և արտադրական տարածքների՝ ըստ նպատակային նշանակության մակերեսից միջինացված արտադրվող աղբի ծավալը, որը հնարավորություն կստեղծի ապահովել աղբահանության վճարի գանձումը՝ մինչև յուրաքանչյուր կազմակերպության մասով աղբի ծավալի չափման հնարավորությունների ստեղծումը: Այսպիսով, առանձնացվել են հետևյալ կատեգորիաները՝

- Առևտրի (այդ թվում շուկաների), հանրային սննդի և այլ ծառայությունների մասով հաշվարկվել է, որ միջինացված յուրաքանչյուր 35.72 քառ. մետրից ամսական արտադրվում է 1 խմ աղբ (կամ 1 քմ ամսական՝ 70 դրամ):
- Հյուրանոցների և այլ հասարակական օբյեկտների մասով հաշվարկվել է յուրաքանչյուր 83.3 քառ. մետրից ամսական արտադրվում է 1 խմ աղբ (կամ 1 քմ ամսական 30 դրամ),
- Արտադրական, արդյունաբերական և գրասենյակային տարածքների մասով յուրաքանչյուր 312.5 քառ. մետրից ամսական 1 խմ (կամ 1 քմ ամսական 8 դրամ),
- Կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական օբյեկտների մասով՝ յուրաքանչյուր 625 քառ. մետրից ամսական 1 խմ աղբ (կամ 1 քմ ամսական 4 դրամ):

Երևանի վարչական շրջանների միջոցով գույքագրվել են նշված կատեգորիայի օբյեկտների քանակները և մակերեսներ, ինչն էլ հաշվի առնելով հաշվարկվել է աղբահանության վճարի հաշվարկային բազան, որից նախագծով ծրագրվել է 90%-ը՝ հաշվի առնելով փակ օբյեկտների քանակը և մակերեսների հավանական անճշտությունները (ցանկերը կցվում են):

- ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների օրինականացման վճարների գծով ծրագրվել է 250,000.0 հազ դրամ՝ 2011 թվականի 200,000.0 հազ. դրամի դիմաց՝ հաշվի առնելով սպասվող կատարողականը,

- վարչական իրավախախտումների համար պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտների գծով՝ 137,399.1 հազ. դրամ՝ 2011 թվականի 108,200.0 հազ. դրամի դիմաց,

- Նվիրատվության, ժառանգության իրավունքով ֆիզիկական անձանցից և կազմակերպություններից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադրված

արտաքին աղբյուրներից՝ 150.000,0 հազ. դրամ, որը 2011 թվականին չէր նախատեսվել, սակայն փաստացի ապահովվել են:

- օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտների գծով ծրագրվել է 833,150.0 հազ. դրամ՝ 2011 թվականին նախատեսված 1,389,253.8 հազ. դրամի դիմաց: Նշված եկամուտների նվազեցումը պայմանավորված է նրանով, որ 2012 թվականի բյուջեում չեն ներառվել ՀՀ պետական բյուջեով նախատեսված վարձատրվող հասարակական աշխատանքների և գյուղատնտեսական կենդանիների պատվաստում ծրագրերով նախատեսվող հատկացումները և ներառվել են միայն կառուցապատվող տարածքներում հարկայնության յուրաքանչյուր քառակուսի մետրի համար կառուցապատող կազմակերպությունների կողմից վճարման ենթակա պայմանագրային պարտավորությունները:

2. Ծախսերի կանխատեսում.

Երևան քաղաքի 2012 թվականի բյուջեի նախագծով ծախսերի ծավալը ծրագրավորվել է 63,766,652.5 հազ. դրամի չափով: Ծախսերի ամբողջ ծավալի 96.2%-ը կամ 61,367,126.1 հազ. դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին (վարչական բյուջե), 2,399,526.4 հազ. դրամը կամ 3.8%-ը ոչ ֆինանսական ակտիվների գծով **գուտ** ծախսերին (ֆոնդային բյուջե):

Երևան քաղաքի 2012 թվականի բյուջեի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) ծախսային մասը ավել է 2011 թվականի ճշտված բյուջեով նախատեսված ծախսային մասից 968,702.9 հազ. դրամով, իսկ սկզբնական հաստատվածից 5,470,204.6 հազ. դրամով և կազմվել է ծրագրային սկզբունքների հիման վրա:

Նախագծով առաջարկվող բյուջետային ծախսերի ծավալներում սոցիալական բնագավառի ծախսերի (կրթություն, առողջապահություն, սոցիալական ապահովություն) տեսակարար կշիռը կազմում է 31.8%, շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված ծախսերին՝ 11%, տրանսպորտի բնագավառին (այդ թվում՝ ճանապարհային տրանսպորտի) վերաբերող ծախսերին՝ 32.4%:

Նախագծի վարչական մասում նախատեսվել է պահուստային ֆոնդ 4,826,454.9 հազ. դրամի չափով, որը կազմում է վարչական եկամուտների 7.6%-ը, որից 2,120,302.4 հազ. դրամը նախագծով նախատեսվում է հատկացնել ֆոնդային մաս: Ֆոնդային մասով պահուստային ֆոնդ չի նախատեսվել, որը կնախատեսվի տարեսկզբի մնացորդի ճշտման ժամանակ:

Ստորև ներկայացվում են Երևան քաղաքի 2012 թվականի բյուջեի նախագծով ծրագրավորվող ծախսերի սկզբունքներն ու հիմնավորումները՝ ըստ ծրագրերի.

1. Կառավարման մարմնի պահպանում ծրագրով ծախսերը նախագծում ծրագրավորվել են հիմնականում հաշվի առնելով գործող օրենսդրության պահանջները, խորհրդատվական բնույթ կրող նորմատիվները, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման համար դրանց գործունեության առանձնահատկությունները: Այս ծրագրով նախագծում ծախսեր են նախատեսվել 6,623,587.3 հազ. դրամ կամ ընդհանուր ծախսերի 10.4%-ը, ինչը 2011 թվականի հաստատված (ճշտված) ցուցանիշից ավել է 172,689.4 հազ. դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է 2011 թվականի ապրիլի 1-ից աշխատակազմի աշխատավարձի դրույքաչափերի ավելացմամբ: Նշված ծրագրով նախատեսված ծախսերում մեծ տեսակարար կշիռ է կազմում աշխատավարձի ֆոնդը 3,866,518.5 հազ. դրամ, ինչը ծրագրավորվել է հիմք ընդունելով 2011 թվականի հաստատված

հաստիքացուցակը: Ֆոնդի 356,822.0 հազ. դրամի չափով ավելացումը 2011 թվականի նկատմամբ պայմանավորված է 2011 թվականին ավագանու որոշմամբ հաստիքացուցակում կատարված փոփոխություններով: Աշխատավարձի ֆոնդի 13.5%-ի չափով նախատեսվել է նաև պարգևատրման ֆոնդ՝ աշխատողներին խրախուսելու նպատակով: Պարտադիր սոցիալական ապահովության վճարները հաշվարկվել են «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան և ծրագրվել են 552,912.1 հազ. դրամի չափով: Էներգետիկ ծառայությունները ներառում են էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսերը, որոնք հաշվարկվել են նախորդ տարիների փաստացի և 2011 թվականին սպասվող ծախսերի ծավալների միջին ցուցանիշներով և հաստատված ամիսներով: Կոմունալ ծառայությունները ներառում են ջրամատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև վարչական շենքերի աղբահանման և միջատազերծման հետ կապված ծախսերը և ծրագրվել են 15,734.7 հազ. դրամի չափով: Կապի ծառայությունները ներառում են փոստային և սուրհանդակի ծառայությունները, քաղաքային հեռախոսակապի, բջջային կապի, ինտերնետային և օպտիկական կապուղու ծառայությունները, որոնք հաշվարկվել են 24.08.2007 թվականի «Արմենտել» ՓԲԸ-ի կողմից մատուցվող ծառայությունների սակագների սահմանման մասին» ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հ. 340-Ն որոշման (քաղաքային ցանցի մասով), ինչպես նաև փաթեթի նախորդ տարվա փաստացի ծախսի վրա և ծրագրվել են 163,094.7 հազ. դրամ, ինչը պակաս է 2011 թվականի ճշտված ցուցանիշից 18,941.2 հազ. դրամով: Ապահովագրական ծախսերը նախատեսվել են 6,144.0 հազ. դրամի չափով՝ հիմք ընդունելով 2010 թվականի մայիսի 18-ի «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի պահանջները: Գույքի և սարքավորումների վարձակալությունը ծրագրվել է 128,176.0 հազ. դրամի չափով՝ 2011 թվականի 143,060.0 հազ. դրամի դիմաց, որի մեջ հիմնական մասը կազմում է քաղաքապետարանի ծառայողական մեքենաների վարձակալությունը, որն իր հերթին ներառում է նաև դրանց ընթացիկ նորոգումը, վառելիքը, վարորդի տրամադրումը և այլն: Արտասահմանյան գործուղումների գծով ծախսերը պլանավորվել են՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն ու վճարման կարգը սահմանելու մասին» հ. 235-Ն որոշմամբ սահմանված նորմերով և նախորդ տարիների փաստացի և 2012 թվականին ծրագրված քանակներով և ծրագրվել է 81,712.0 հազ. դրամի չափով՝ շուրջ 3,398.0 հազ. դրամով պակաս 2011 թվականին նախատեսված ցուցանիշից: Վարչական ծառայությունների գծով նախատեսվել է 2,762.1 հազ. դրամ՝ քաղաքապետարանի

Ե՛ւ ձ՞ն՝ 3 ք 3 Ա՛ 3 Կ՛ ձ՞ծՍՅերի 3 ՅԵ՛ 3 ի՛ 3 ի՛ 3 ½ Ս՛Կե՛ճձՍՍ գրքերի (փաստաթղթերի) կարման ծառայությունների համար: Համակարգչային ծառայությունների գծով ծրագրվել է 31,879.6 հազ. դրամ՝ քաղաքապետարանի գույքահարկի, հողի հարկի, տեղական տուրքերի և հողի վարձակալության հաշվառման (բազայի) և գանձապետական համակարգչային առկա ծրագրերի սպասարկման համար: Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայությունների համար նախատեսվել է 5,915.0 հազ. դրամ՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված համայնքային ծառայողների վերապատրաստման գործընթացն ապահովելու նպատակով: Տեղեկատվական ծառայությունների գծով ծախսերը նախատեսվել են 45,741.1 հազ. դրամի չափով պաշտոնական և գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրքերի, բրոշյուրների տպագրության, թերթերի և ամսագրերի, տպագրական աշխատանքների իրականացման, լրատվական և գովազդային ծառայությունների ձեռքբերման համար: Կառավարչական ծառայությունների գծով ծախսերը նախատեսվել են 11,000.0 հազ. դրամի չափով և ներառում են փորձագիտական և աուդիտորական մասնագիտացված կազմակերպությունների ծառայությունները:

մասն որոշ ստորաբաժանումների առանձնահատկություններով պայմանավորված անձնական ավտոմեքենաների ծառայողական նպատակներով օգտագործման դեպքերով: Վարչական սարքավորումների գծով ծրագրվել է 111,395.8 հազ. դրամ, որի շրջանակներում նախատեսվել է հիմնականում կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներն ապահովել անհրաժեշտ գույքով և տեխնիկայով: Այս ծրագրով նախատեսվել է մասն մի շարք այլ հոդվածներով ծախսեր, որոնց ծրագրավորման համար հիմք են ընդունվել ինչպես գործող օրենսդրության պահանջները այնպես էլ նախորդ տարիների փաստացի կատարված ծախսերը:

2. Վարչական օբյեկտների հիմնանորոգում ծրագրով նախատեսվել է 197,000.0 հազ. դրամ, որից 128,000.0 հազ. դրամը Փ. Բուզանդի 1/3 հասցեի շենքի արդեն իսկ սկսված նորոգման և ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներն ավարտին հասցնելու համար, իսկ 69,000.0 հազ. դրամը՝ Արաբկիր, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նուբարաշեն և Բանաբեռ-Ջեյթուն վարչական շրջանների վարչական շենքերի մասնակի նորոգման համար:

3. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպման ծրագրով ծրագրվել է 41,695.6 հազ. դրամ որպես պատվիրակված լիազորություն՝ հիմք ընդունելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով նախատեսված ցուցանիշը, որը հավասար է 2011 թվականի հաստատված ցուցանիշին:

4. Նախագծային աշխատանքներ ծրագրով նախատեսվել է 203,900.0 հազ. դրամ 2013 թվականի բյուջեն ծրագրավորելիս կապիտալ ծրագրերը նախագծանախահաշվային փաստաթղթերով ապահովելու համար:

5. Երևան քաղաքի գլխավոր հատակագծի ճշգրտում ծրագրով նախատեսվել է 18,000.0 հազ. դրամ՝ Երևան քաղաքի գլխավոր հատակագծի պահանջներով պայմանավորված ըստ տարիների կատարված աշխատանքների վերլուծության հիման վրա ճշգրտման համար:

6. Դիմումներ, հայցադիմումներ, դատարանի որոշումների և վճիռների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս սահմանված վճարներ ծրագրով նախատեսվել է 53,950.0 հազ. դրամ պետական տուրքերի վճարման համար՝ 750.0 հազ. դրամով ավել 2011 թվականի ցուցանիշից:

7. Գույքի նկատմամբ իրավունքների գրանցման և տեղեկատվության տրամադրման հետ կապված վճարումներ ծրագրով նախատեսվել է 110,500.0 հազ. դրամ, ինչը ներառում է ինչպես Երևան համայնքին սեփականության իրավունքով փոխանցված գույքի, այնպես էլ ինքնակամ կառույցների օրինականացման գործընթացում համայնքի սեփականություն ճանաչվող գույքի գրանցման ծախսերը:

8. Քաղաքացիական պաշտպանությանն աջակցություն և զորակոչի կազմակերպմանն աջակցություն ծրագրերով նախատեսվել են համապատասխանաբար 22,000.0 հազ. դրամ և

21.320.0 հազ. դրամ, ինչը պայմանավորված է գործող օրենքադրությամբ նախատեսված նվազագույն և անհրաժեշտ աջակցությունն ապահովելով:

9. Ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում ծրագրով նախատեսվել է 327,937.9 հազ. դրամ՝ նոր ստեղծվող կանաչ տարածքներում ոռոգման ցանցի ապահովման համար՝ հիմք ընդունելով սահմանված կարգով կազմված նախահաշվային փաստաթղթերը, 2011 թվականին այս ծրագրով նախատեսվել էր 257,434.4 հազ. դրամ:

10. Ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում ու ասֆալտ-բետոնյա ծածկի հիմնանորոգում ծրագրերով նախատեսվել են 4,130,283.7 հազ. դրամ և 200,000.0 հազ. դրամ: Նախատեսված ընդհանուր 4,330,283.7 հազ. դրամից 3,284,000.0 հազ. դրամը նախատեսված է ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով որպես նպատակային հատկացում (սուբվենցիա): Նշված գումարի շրջանակներում նախատեսվում է իրականացնել շուրջ 826,000 քմ ասֆալտ-բետոնյա ծածկի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, որի 60%-ը նախատեսվում է իրականացնել բակային տարածքներում՝ այդպիսով ավարտին մոտեցնելով բակային տարածքների ոռոգման աշխատանքների ծրագիրը, ինչպես նաև շուրջ 13,000 քմ գրունտային ճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ:

11. Եզրաքարերի վերանորոգում ծրագրով նախատեսվել է 14,000.0 հազ. դրամ՝ վթարված եզրաքարերի վերանորոգման և փոխարինման նպատակով:

12. Հեմապատերի վերանորոգում ծրագրով նախատեսվել են 119,000.0 հազ. դրամ՝ համապատասխան նախահաշվային արժեքներով: Առկա վթարային հեմապատերից ընտրվել են առաջնայինները:

13. Հետիոտն անցումների կառուցում և վերանորոգում ծրագրով նախատեսվել է 12,500.0 հազ. դրամ՝ հետիոտն անցումների վերանորոգման աշխատանքներ իրականացնելու համար:

14. Կամրջային կառուցվածքների վերականգնում և պահպանում ծրագրով նախատեսվել է 90,000.0 հազ. դրամ՝ Երևան քաղաքի կամուրջների սպասարկման աշխատանքների համար:

15. Հրազդանի կիրճի բարեկարգում ծրագրով նախատեսվել է 652,000.0 հազ. դրամ, որից 2,000.0 հազ. դրամը Արաբկիր վարչական շրջանի մասով նախատեսում է ընթացիկ բարեկարգման աշխատանքների համար, իսկ 650,000.0 հազ. դրամը՝ 2011 թվականին սկսած Հրազդանի կիրճի բարեկարգման աշխատանքներն ավարտին հասցնելու համար:

16. Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում ծրագրով նախատեսվել է 3,190,000.0 հազ. դրամ՝ համապատասխան նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա: Ծրագիրը նախատեսում է «Ալմաստ» գործարանի ե/գ կայարանի հարակից տարածքի ճանապարհի կառուցում, , ³ ԻՇՂ ԴԵՂ ÷ ձՈձՈՒ բարեկարգում /Ե՝ ³ ԴՇ ՂՁՇ Ե՝ ³ ձՍԵՂձՈՒՇՈՒ Ե՝ ³ ձՍԵՂձՈՒՇՈՒ ÷ ձՈձՈՒ, գլխավոր պողոտայի վերակառուցում (Սարյան-Եզնիկ Կողբացի փողոցների հատված), , ³ ԴՇ ÷ ձՈձՈՒ վերակառուցում, Լալայանց - Պուշկին

փողոցների հատվածի և Թ՛ձձԵՇԵ՝ Ս՛ՇՅ՝ Օ՝ Ե՝ . Ս՛ՁՇ գրունտային ճանապարհի ի՝ Ե՛ձձձձՍՍ, ՚՝ 3 . ճ՝ 3 ի՛ձՅՍ՝ 6 և Ե՛ԵՐ՝ Ե՛ԻՇ՝ փողոցների ի՛ճ՝ Ս՛Ի՝ Ս՛Շ՝ . Ի՛Ե՛ճՇ՝ 3 Զ՝ Ս՛ձՅ՛ ի՝ 3 ԱձՍՍ և ասֆալտապատում, Սիլիկյան թաղամաս տանող ճանապարհի մասնակի վերակառուցում, Ծարավ Աղբյուրի փողոցի վերակառուցում, Հալաբյան-Աբելյան փողոցների վերանորոգում և մ՝ Ս՛ՁԵ՛ճՇ՝ Ի՛Ե՛ճ՝ Գ՛ձճձ . ձձՍՍ: 2011 թվականին այս ծրագրով իրականացվել են Դավիթ-Բեկ փողոցի վերակառուցման առաջին փուլի աշխատանքները, Էրեբունու և Խաչիկ-Դաշտենց փողոցների տրամվայի գծերի ապամոնտաժման և ասֆալտապատման աշխատանքները, ինչպես նաև Ծիծեռնակաբերդի խճուղու երկրորդ փուլի ասֆալտապատման աշխատանքները:

17. Փողոցների պահպանում և շահագործում ծրագրով նախատեսվել է 70,000.0 հազ. դրամ, որից 50,000.0 հազ. դրամը՝ քաղաքի տարբեր հատվածներում մե ի՝ 3 Օ՝ 3 ի՛Յ՝ Օ՝ 3 Յ՛ ի՝ 3 Զ՝ 3 ի՛Ե՛ճՇ՝ Ի՛Ե՛ճ՝ Գ՛ձճձ . Սձն և 20,000.0 հազ. դրամը՝ Իսակովի, Մյասնիկյան, Աթենքի և այլ փողոցների ընթացիկ բարեկարգման աշխատանքները համայնքային կազմակերպության միջոցով բարեկարգելու համար:

18. Ասֆալտային քանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրով (պատվիրակված լիազորություններ) ծրագրվել է 4,730,405.7 հազ. դրամ, որպես պատվիրակված լիազորություն՝ հիմք ընդունելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով նախատեսված ցուցանիշը:

19. Ասֆալտային քանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրի իրացման միջոցառումներ ծրագրով նախատեսվել է 600,000.0 հազ. դրամ Երևան քաղաքի վարչական սահմաններում բացառիկ գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում գտնվող օտարվող սեփականության (հողի) դիմաց փոխհատուցում տրամադրելու համար՝ որպես ներդրումային ծրագրի համաֆինանսավորում:

20. Վերելակների հիմնանորոգում ծրագրով նախատեսվել է 75,007.1 հազ. դրամ բազմաբնակարան շենքերի վերելակների միայն կապիտալ բնույթի աշխատանքների համար:

21. Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսվել է 1,767,951.1 հազ. դրամ որպես պատվիրակված լիազորություն՝ հիմք ընդունելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով նախատեսված ցուցանիշը: Նշված գումարի շրջանակներում բացի պահպանման ընթացիկ ծախսերից, նախատեսվել է իրականացնել նաև թվով 2-3 վթարային շարժասանդուղքների վերանորոգում:

22. Վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայություններ ծրագրով նախատեսվել է 313,500.0 հազ. դրամ որպես սուբսիդիա «Երևանի էլեկտրատրանսպորտ»

ՓԲԸ-ին, որի ծրագրավորման հիմքում ընկած է ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով նախատեսված նպատակային հատկացումը (սուբվենցիա):

23. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Եվրոպական ներդրումային բանկի և Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման ծրագրերով նախատեսվել են ընդհանուր 4,717,748.8 հազ. դրամի ծրագրեր, որպես պատվիրակված լիազորություն՝ հիմք ընդունելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով նախատեսված համապատասխան ծրագրերը (ցանկը կցվում է):

24. Դրոշների տեղադրում ծրագրով նախատեսվել է 73,000.0 հազ. դրամ, ինչը ներառում է ինչպես հատուկ օրերին քաղաքի դրոշակազարդման աշխատանքները, այնպես էլ քաղաքի տարբեր հատվածներում ՀՀ դրոշների տեղադրումը:

25. Աջակցություն համայնքային կազմակերպություններին հուղարկավորությունների հետ կապված անվճար ծառայությունների մատուցման և գերեզմանատների պահպանման համար ծրագրով նախատեսվել է 22,920.0 հազ. դրամ, ինչը ծրագրավորվել է հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի հ. 1910-Ն որոշման հ.1 հավելվածի 16-րդ կետը և նախատեսվել է գերեզմանատների վրա անվճար տեղադրվող մետաղական ցուցանակների համար, ինչպես նաև Կոմիտասի անվան պանթեոնի պահպանության համար:

26. Կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացում ծրագրով նախատեսվել է 100,000.0 հազ. դրամ՝ «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ին սուբսիդավորելու համար: Նախատեսվել է 2011 թվականի հաստատված ցուցանիշի չափով:

27. Աջակցություն համայնքային և ոչ համայնքային կազմակերպությունների ծրագրերին ծրագրով նախատեսվել է 150,000.0 հազ. դրամ ընթացիկ դրամաշնորհների տեսքով կրթական, մշակութային և այլ կազմակերպությունների Երևան քաղաքին վերաբերվող ծրագրերին աջակցելու նպատակով և հաշվարկվել է 2011 թվականի սպասվող կատարողականից ելնելով:

28. Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր ծրագրով նախատեսվել են մուտքեր ա) անշարժ գույքի իրացումից 1,300,000.0 հազ. դրամի չափով, որից 1,000,000.0 հազ. դրամը ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ. 912-Ն որոշմամբ նախատեսված ինքնակամ կառույցների օրինականացման գործընթացում կառույցների օտարումից և 300,000.0 հազ. դրամը՝ Երևան համայնքին սեփականության իրավունքով փոխանցված և շահագործման համար ոչ պիտանի կաթսայատների և այլ գույքի օտարումից:

բ) Հողի օտարումից 7,300,000.0 հազ. դրամ, որից 5,600,000.0 հազ. դրամը՝ հողերի աճուրդով և ուղղակի վաճառքով օտարումներից, որոնք ներառում են նաև 2011 թվականին կնքված

գործարքների տարաժամկետ վճարումներից ակնկալվող մուտքերը, իսկ 1,700,000.0 հազ. դրամը՝ օրինականացված ինքնական կառույցների զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողերի օտարումից:

29. Երևան քաղաքի վարչական սահմանների ճշգրտում ծրագրով նախատեսվել է 38,565.1 հազ. դրամ, համաձայն «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հավելվածի Երևան քաղաքի սահմանների նկարագիրը ենթարկվել է փոփոխության, ինչից ելնելով հարևան մարզերի հետ սահմանները հստակ տարանջատելու համար անհրաժեշտություն է առաջացել Երևան քաղաքի փոփոխված վարչական սահմանագծով, ներառյալ Զվարթնոց օդանավակայանը, տեղադրել նոր սահմանայուներ:

30. Հասցեավորման աշխատանքներ ծրագրով նախատեսվել էր 171,075.0 հազար դրամ: Երևան քաղաքի ավագանու 06.05.2011 թվականի «Անշարժ գույքի հասցեի տրամադրման դիմաց վճար սահմանելու մասին» N 224-Ն որոշման համաձայն 2011 թվականին հասցեավորման ծառայություններ ձեռք բերելու նպատակով նախատեսվել էր 78,351.0 հազ. դրամ՝ 6 ամսվա կտրվածքով, որով էլ պայմանավորված է 2012 թվականին ցուցանիշի ավելացումը:

31. «Գեղեցիկ Երևան» ծրագրի իրականացում ծրագրով նախատեսվել է 64,680.0 հազ. դրամ: Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի հունիսի 24-ի «Միավորված Ազգերի Զարգացման Ծրագրի Հայաստանյան գրասենյակի «Գեղեցիկ Երևան» ծրագրին մասնակցելու մասին» N 258-Ա որոշմամբ համաձայնություն է տրվել Միավորված Ազգերի Զարգացման Ծրագրի Հայաստանյան գրասենյակի (այսուհետ՝ ՄԱԶԾ) «Գեղեցիկ Երևան» ծրագրին, համաձայն որի նախատեսվում է 2011 և 2012 թվականների ընթացքում Երևան քաղաքում իրականացնել վատ վիճակում գտնվող հուշարձանների նորոգման, դրանց հարակից տարածքների բարեկարգման, արտաքին լուսավորության անցկացման, Երևան քաղաքի տարբեր վարչական շրջանների բազմաբնակարան շենքերի արտաքին տեսքի, շքամուտքերի վերանորոգման աշխատանքներ: «Գեղեցիկ Երևան» ծրագրի բյուջեն 2011-2012 թվականների համար կազմում է 212,520.0 հազ. դրամ՝ հավասար բաշխելով Երևանի քաղաքապետարանի և ՄԱԶԾ-ի միջև, որից Երևանի քաղաքապետարանի 2011 թվականի համաֆինանսավորման բաժինը կազմում է 40,670.0 հազ. դրամ: Համաձայն ծրագրի աշխատանքները ձեռք բերելու նպատակով նախատեսվում է նշված գումարը տրամադրել ՄԱԶԾ-ին: «Գեղեցիկ Երևան» ծրագրի շրջանակներում 2011 թվականին իրականացվել են Ս. Շահումյանի հուշարձանի պատվանդանի և նրա հարակից տարածքների բարեկարգման և շենքերի արտաքին տեսքի վերանորոգման աշխատանքներ: Միաժամանակ, 2012 թվականին իրականացվելիք աշխատանքների համար ծրագրով նախատեսվում է հատկացնել 64,680.0 հազ. դրամ՝ Վ. Տերյանի և Ե. Չարենցի հուշարձանների նորոգման, դրանց հարակից տարածքների բարեկարգման, արտաքին լուսավորության անցկացման,

39. Սիզամարգերի ստեղծում և ծաղկապատում ծրագրով նախատեսվել է 405,270.8 հազ. դրամ՝ նախահաշվային արժեքով, ինչի շրջանակներում նախատեսվում է գազոնապատել և ծաղկապատել քաղաքի փողոցների և քաղաքի մուտքերի շրջակայքը: Ընդ որում՝ նշված գումարի շրջանակներում ավելի արդյունավետ կազմակերպելու արդյունքում նախատեսվում է ձեռք բերել կրկնակի քանակությամբ շուրջ 1,600,000 հատ ծաղկասածիլներ և սիզամարգերի ստեղծման և պահպանման համար անհրաժեշտ բուսահող և կարմիր ավազ, ինչպես նաև ապահովել տեղական մշտադալար տնկիների և սածիլների ձեռքբերումը՝ դրանով իսկ եռապատկելով Երևան քաղաքի սիզամարգերի ծաղկապատ և կանաճապատ վիճակը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաև սիզամարգերի ստեղծում Դավթաշեն կամրջի շրջակայքում, Մյասնիկյան-Աճառյան կամրջի աջ և ձախ հատվածներում, Դավիթ Անհաղթ, Դրոյի և Հալաբյան փողոցների շրջակայքերում:

40. Թափառող կենդանիների վնասագերծում ծրագրով նախատեսվել է 220,000.0 հազ. դրամ՝ 2011 թվականին նախատեսված 180,000.0 հազ. դրամի դիմաց Երևան քաղաքում խնդիրը որակապես փոխելու համար:

41. Ինքնակամ կառույցների քանդում ծրագրով նախատեսվել է 34,600.0 հազ. դրամ այն ինքնակամ կառույցների քանդման, որոնք հնարավոր չէ իրականացնել կառուցապատողների հաշվին:

42. Չորրորդ աստիճանի վթարային շենքերի քանդման հետևանքով բնակատարածություններից զրկված բնակիչների փոխհատուցման համար շենքերի կառուցում ծրագրով նախատեսվել է 1,250,000.0 հազ. դրամ՝ Սիսակյան 22 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքի աշխատանքներն ավարտին հասցնելու համար:

43. Չորրորդ աստիճանի վթարային շենքերի քանդման հետևանքով բնակատարածություններից զրկված բնակիչների փոխհատուցման համար բն³ ի³ ճ³ ԿԿԸ ձեռք բերում ծրագրով նախատեսվել է 1,000,000.0 հազ. դրամ, Մարգարյան 37 հասցեում չորրորդ աստիճանի ազատված վթարային շենքի քանդման, մույն տեղում բազմաբնակարան շենքի կառուցման և այդ շենքից բնակարանների ձեռքբերման համար:

44. Համաշխարհային բանկի և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ ջրամատակարարման ծրագրերով նախատեսվել է 3,925,229,8 հազ. դրամ որպես պատվիրակված լիազորություն և ծրագրավորվել է ՀՀ 2012 թվականի պետական բյուջով նախատեսված ցուցանիշների հիման վրա:

45. Արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգում ծրագրով նախատեսվել է 180,000.0 հազ. դրամ, որից 150,000.0 հազ. դրամը քաղաքի չլուսավորված փողոցների և բակերի արտաքին լուսավորության ցանցը վերականգնելու համար, իսկ 30,000.0 հազ. դրամը՝ քաղաքի չլուսավորված բոլոր այգիները լուսավորելու համար:

46. Արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքներ ծրագրով նախատեսվել է 1,696,000.0 հազ. դրամ ներկայումս գործող լուսավորության ռեժիմի պահպանման պարագայում աշխատանքների կազմակերպման համար: Ծրագիրը նախատեսված է ՀՀ 2012 թվականի պետական բյուջով նախատեսված նպատակային հատկացման (սուբվենցիայի) հաշվին:

47. Շենքերի գեղարվեստական լուսավորում ծրագրով նախատեսվել է 150,000.0 հազ. դրամ՝ 2011 թվականին ֆասադները մաքրված և վերանորոգված շենքերը լուսավորելու համար:

48. Շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքներ ծրագրով նախատեսվել է 6,000.0 հազ. դրամ, ինչը ներառում է բազմաբնակարան շենքերի վթարայնության աստիճանի հետազոտումը և ինքնակամ կառույցների օրինականացման գործընթացում կառույցների վերաբերյալ տեխնիկական եզրակացությունների տրամադրումը:

49. Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում և բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում ծրագրերով նախատեսվել է ընդհանուր 290,284,2 հազ. դրամ՝ տարբեր մոտեցումներով աշխատանքները կազմակերպելու համար (աշխատանքների պատվեր, նյութերի տրամադրում համատիրություններին և այլն):

50. Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում և պահպանում ծրագրով նախատեսվել է 944,432,1 հազ. դրամ՝ վարչական շրջանների կողմից 2012 թվականի համար նշված գումարի շրջանակներում նախատեսվել են 12 վարչական շրջանների պատվերով ընտրված բակերի բարեկարգման, ինչպես նաև քաղաքապետարանի պատվերով թվով 10 վարչական շրջաններում թվով 12 մինի ֆուտբոլի դաշտերի կառուցման աշխատանքները:

51. Բազմաբնակարան ԲեՅնեի ք³ճեՂ³ճ•Ս³Յ³Ս³Ե³ ԲԵ³ Ի³ՅնՅեճ ծրագրերով նախատեսվել է ընդհանուր 1,357,000.0 հազ. դրամ, որից 1,100,000.0 հազ. դրամը նախատեսվում է 2011 թվականին սկսված շենքերի ֆասադների ընթացիկ նորոգման և մաքրման համար, 50,000.0 հազ. դրամը շենքերից հնարավոր քարաքափումներից պաշպանիչ միջոցառումների իրականացման համար և 207,000.0 հազ. դրամը բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգման աշխատանքների համար:

52. Ջրային կառույցների շահագործում և պահպանում ծրագրով նախատեսվել է 300,000.0 հազ. դրամ՝ Երևան քաղաքի համայնքային սեփականություն հանդիսացող բոլոր շատրվանների շահագործման և ընթացիկ նորոգման համար:

53. Կաթսայատների պահպանում ծրագրով նախատեսվել է 30,000.0 հազ. դրամ, ինչը ներառում է Երևան քաղաքին սեփականության իրավունքով փոխանցված կաթսայատների զուտ պահպանման (պահակային ծառայության նվազագույն արժեքը) ծախսերը:

54. Ի³Ս³ճ³ճ•ՅոճՍՅեճ Իեճ³Յճճ•ճՍ³ · · ճճՅ³½³ճ³ճ³ճՍ³ ծրագրով նախատեսվել է 86,800.0 հազ. դրամ Ա՛ի՛ի 70 Ի³Ս³ճ³ճ•ՅոճՍՅ³Յ³ Իեճ³Յճճ•Ս³Յ³ · · ճճՅ³½³ճ³ճ³ճ³Յ³ճ³ճ³ճ:

55. Աջակցություն առողջապահական կազմակերպություններին բժշկական սարքավորումների և ձեռքբերման ծրագրով նախատեսվել է համայնքային կազմակերպություններին 60,000.0 հազ. դրամի դրամաշնորհ, որի շրջանակներում նախատեսվել է առաջնային օդակի առաջնահերթ համարվող բժշկական սարքավորումների արդիականացում:

56. Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում ծրագրով նախատեսվել է 272,643,5 հազ. դրամ՝ թիվ 12, 17 պոլիկլինիկաների և «Գրիգոր Նարեկացի» ԲԿՓԲԸ-ի «Նոր-Արեշ» պոլիկլինիկայի և «Ծ³ Ի³ տուբերնի՝ ձմեռ³ ՍՀ³ 1ՀԵՁ³ ԿԵՆ³» ԱՊՓԲԸ-Հ ԷՁ³ Է ԳեձձՕՍ³ Կ³ Ն³ Ս³ Ի³ ՌգերՀ ԿեՌ³ Սան, «ԹՀ³ 22 ձձՀՀ³ Ինիկա» ՓԲԸ-ի Ս³ ԵԿ³ ԲեԿ³ ՆՀ³ ՍԿ³ ԿձձձՍան, թիվ 1, 4, 5, 12, 15, 17, 20, 22, 9 և Նորագավիթ պոլիկլինիկաների շենքերի արտաքին տեսքի բարելավման՝ մուտքերի դռների կապիտալ նորոգման աշխատանքների համար:

57. Սպորտային միջոցառումների կազմակերպում ծրագրով նախատեսվել է 84,675.8 հազ. դրամ՝ հիմք ընդունելով նախորդ տարիներին իրականացված և 2012 թվականին սպասվող միջոցառումների քանակն ու ծախսերը:

58. Հանգստի գոտիների և սրճարանների կառուցում ու պահպանում ծրագրով նախատեսվել է 162,000,0 հազ. դրամ, որից՝ 22,000.0 Ն³ 1/2. 1Ռ³ ՍԱ³ Ն³ Կ. Ե³ ԻՀ³ . ձ³ ԻՀԿեՌՀ³ .. զբոս³ Ս. ՀԿեՌՀ³ ԱԿ³ ձ³ ՕՀ³ Կձձձ. Ս³ Կ .. պահպանման համար (Դավթաշեն I և II թաղամասերի միջև գտնվող այգու պահպանում՝ 10,000.0 Ն³ 1/2. 1Ռ³ Ս, Երկրորդ աշխարհամարտում զոհված Քանաքեռցիների հիշատակին նվիրված հուշակոթողի վերանորոգում՝ 8,000.0 Ն³ 1/2. 1Ռ³ Ս և Ազատության պող. հարող տարածքում Հ. Պարոնյանի անվան պուրակի վերանորոգում՝ 4,000.0 Ն³ 1/2. 1Ռ³ Ս), 100,000.0 հազ. դրամը՝ Աջափնյակ վարչական շրջանում հանգստի գոտիձ Ե³ Ի Եձ³ Ս³ Կ, իսկ 40,000.0 հազ. դրամը՝ Սիրահարների զբոսայգու պահպանման համար:

59. Գրադարանային ծառայություններ ծրագրով նախատեսվել է 287,645.5 հազ. դրամ՝ Երևանի համայնքային գրադարանային կազմակերպություններին սուբսիդիա տրամադրելու համար:

60. Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ ծրագրով նախատեսվել է 193,656.1 հազ. դրամ՝ Երևանի ենթակայության թանգարանների պահպանման համար ՀՀ 2012 թվականի պետական բյուջով նախատեսված նպատակային հատակցումների հաշվին:

61. Թանգարան ԿեՌՀ³ Ի³ Ե³ ձձՍ .. 3Ռ³ 1Հ³ Ի³ Կ³ ձձՍ նախատեսվել է 10,000,0 հազ. դրամ՝ 3Ռեբունի Սձձձ-Ա³ Կ. 3Ռ³ ԿՀ³ Ի Եձ³ ձձձձձձ³ Կ .. 3Ռ³ 1Հ³ Ի³ Կ³ ձձձ³ Կ³ Ի³ Ռոլ չԵձՀ³ ՍՀ³ Ս³ Կ³ Եձ³ ՌՌ³ Ի³ Ի³ Կ³ Ի³ Ե³ ձձձ³ Կ³ Ն³ Ս³ Ռ:

62. Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում ծրագրով նախատեսվել է 67,753,9 հազ. դրամ՝ Երևանի ենթակայության «Ավանի մշակույթի տուն», «Թ.2 մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն», «Երևանի «Սեբաստիա» մշակույթի

կենտրոն», «Երևանի «Ժամանց» մշակույթի կենտրոն», «Նոր Նորքի մշակույթի կենտրոն», «Թ.5 մշակույթի կենտրոն» և «Զեյթուն» մշակութային կենտրոն ՀՈԱԿ-ների պահպանման համար:

63. Մշակույթի տների հիմնադրոգում և վերանորոգում ծրագրով նախատեսվել է 88,078.0 հազ. ¹րամ՝ «¹/₄ԵՍՖՁԾՅ ՍԲ ³ ԻձՍՖ ³ ՍՇՅ ԻԵՅ Ի ՌՁՅ» ԾՁ ² Ի-Շ ՌՇՍՅ ³ ՅձՌՁ. Ս ³ Յ ³ ԲԵ ³ Ի ³ ՅՆՅԵՌՇ համար:

64. Մշակութային միջոցառումների իրականացում ծրագրով նախատեսվել է 382,390,0 հազ. դրամ, որի հաշվարկման հիմքում ընկած է 2011 թվականի նույն միջոցառումների համար սպասվող կատարողականը:

65. Կենդանաբանական այգու ցուցադրություններ ծրագրով նախատեսվել է 194,637.7 հազ. դրամ՝ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի սուբսիդավորման համար՝ ՀՀ 2012 թվականի պետական բյուջով նախատեսված նպատակային հատկացումների հաշվին:

66. Կենդանաբանական այգու հիմնադրոգում ծրագրով նախատեսվել է 50,000.0 հազ. դրամ: 2007 թվականից առկա են ամբողջական հիմնադրոգման նախագծանախահաշվային փաստաթղթեր:

67. Երաժշտարվեստի և պարարվեստի համերգներ ծրագրով նախատեսվել է 73,700,3 հազ. դրամ՝ Երևանի ենթակայության «Յու. Բախշյանի անվան մանկական ֆիլիարմոնիա», «Երևան» փողային նվագախումբ», «Հայաստանի փոքրիկ երգիչներ» մանկական ֆիլիարմոնիա», «Մեցոպիանո» ՀՈԱԿ-ների և «Հայ-Արտ» մշակութային կենտրոն ՓԲԸ-ի սուբսիդավորման համար:

68. Թատերական ներկայացումներ ծրագրով նախատեսվել է 236,016.8 հազ. դրամ Երևանի ենթակայության թվով 3 թատրոնների սուբսիդավորման համար ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով նախատեսված նպատակային հատկացումների հաշվին:

69. «^oՌ՝ ³ ՅՁ՝ 2012 ԱՐ ³ Ի ³ ՅՇՅ - ՌՇ Ռ ³ Ս ³ ԲԵ ³ ՌՌ ³ ՍՇՅ Ս ³ ՍՌ ³ Ս ³ Օ ³ Ս» ՍՇՇՁ ³ ԵՍ ³ Յ ՇՌ ³ Ի ³ Յ ³ ՁձՍ ծրագրով նախատեսվել է 6,000.0 հազ. դրամ:

70. Հուշարձանների վերանորոգում և պահպանում ծրագրով նախատեսվել է 40,200.0 հազ. դրամ այն հուշարձանների նորոգման և պահպանման համար, որոնք ընդգրկված չեն պետական պահպանության ենթակա հուշարձանների ցանկում:

71. Անդամակցության վճարներ ծրագրով նախատեսվել է 22,600.0 հազ. դրամ՝ Ֆրասախոս քաղաքների քաղաքապետերի միջազգային ասոցիացիայի, Եվրոպական քաղաքների ասոցիացիայի (EUROCITIES), Սիջազգային քաղաքային համայնքների լուսավորում ասոցիացիայի (LUCI), Մայրաքաղաքների և խոշոր քաղաքների միջազգային ասամբլեայի Հայաստանի համայնքների միության և Հայաստանի ավագանիների ասոցիացիայի անդամակցության վճարները վճարելու համար:

72. Նախադպրոցական ուսուցում ծրագրով նախատեսվել է 5,386,068.0 հազ. դրամ: Հաշվարկների հիմքում դրվել է 1 երեխային ամսական ուսուցման (պահպանման) ծախսերի միջին ինքնարժեքը, որը ծրագրավորվել է 18.0 հազ. դրամի չափով, ինչպես նաև յուրաքանչյուր ՀՈԱԿ-ի պահպանման ծախսերի համար ամսական 250,0 հազ. դրամ, իսկ բյուջեից հատկացումները նախատեսվել են հաշվի առնելով երեխաների փաստացի թվի վերաբերյալ կանխատեսումները:

73. Հանրակրթական ուսուցում, հատուկ կրթություն, ներառական կրթություն, երեկոյան ուսուցում, նախնական մասնագիտական կրթություն և նախնական մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ ծրագրերով նախատեսվել է 11,621,392.8 հազ. դրամ՝ որպես պատվիրակված լիազորության ՀՀ 2012 թվականի պետական բյուջով նախատեսված ցուցանիշներով և հաշվարկվել է օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերով:

74. Արտադպրոցական դաստիարակություն ծրագրով նախատեսվել է 1,602,531.9 հազ. դրամ, ինչը հիմնականում ներառում է Երևանի ենթակայության երաժշտական, սպորտի և արվեստի դպրոցների սուբսիդավորումը: Նշված ծրագիրը ներառում է նաև թվով 2 սպորտ դպրոցների պահպանման ծախսերը, որոնք նախատեսվել են ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով նախատեսված նպատակային հատակցումների հաշվին:

75. Արտադպրոցական կազմակերպությունների հիմնանորոգում և վերանորոգում ծրագրով նախատեսվել է 50,000.0 հազ. դրամ՝ Երևանի ենթակայության երաժշտական և արվեստի դպրոցները ջեռուցման համակարգերով ապահովելու նպատակով:

76. «Հակոբ Կոջոյան» կրթահամալիր ՊՈԱԿ-ում արտադպրոցական դաստիարակության կազմակերպման ծրագրով նախատեսվել է 6,474.0 հազ. դրամ՝ որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի հիման վրա:

77. Նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում և վերանորոգում ծրագրով նախատեսվել է 577,000.0 հազ. դրամ, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել թվով 12 նախադպրոցական հաստատությունների նորոգում:

78. Դպրոցական օլիմպիադաների և այլ միջոցառումների կազմակերպում ծրագրով նախատեսվել է 7,707.0 հազ. դրամ, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 21-րդ մարզական խաղերի կազմակերպում, մանկավարժների խրախուսում, «Ազգային Ժողովի գավաթի» կազմակերպում, առարկայական օլիմպիադաներ, շախմատի օլիմպիադա, հոբելյանական միջոցառումներ:

79. Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների հանգստի կազմակերպում ծրագրով նախատեսվել է 3,065.0 հազ. դրամ և հաշվարկվել է նախորդ տարիների փաստացի կատարված նմանատիպ ծախսերի հիման վրա:

80. Հարազատ չունեցող անձանց և սոցիալապես անապահով ընտանիքների համար հուղարկավորության կազմակերպում ծրագրով նախատեսվել է 33,574.0 հազ. դրամ և հաշվարկվել է 2011 թվականի հաստատված ցուցանիշի հիման վրա:

81. Սոցիալապես անապահով ընտանիքներին տոնական և հիշատակի օրերին աջակցություն, սոցիալապես անապահով անձանց աջակցություն, և հասարակական կազմակերպություններին աջակցություն ծրագրերով նախատեսվել է 371,648.6 հազ. դրամ և հաշվարկված է հստակ ծրագրային մոտեցումներից, բնակչության առանձնացված խմբերի աջակցության միջոցառումներից ելնելով:

82. Սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպում ծրագրով նախատեսվել է 207,505.8 հազ. դրամ որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2012 թվականի պետական բյուջով նախատեսված ցուցանիշների հիման վրա:

Երևան քաղաքի 2012 թվականի բյուջեի նախագծով նախատեսվում է 50,000.0 հազ. դրամի չափով պակասուրդ, որը կֆինանսավորվի տարեսկզբի ազատ մնացորդի հաշվին: Տարեսկզբի ազատ մնացորդը կանխատեսված ցուցանիշ է, որը կճշգրտվի 2011 թվականի բյուջետային տարվա ավարտից հետո: Միաժամանակ 2011 թվականի բյուջետային տարվա ավարտին բյուջետային պարտքեր չեն նախատեսվում:

Այսպիսով, Երևան քաղաքի 2012 թվականի բյուջեի նախագիծը առաջարկվում է հաստատել.

1. եկամուտների գծով՝ 63,716,652.5 հազ. դրամ,
2. ծախսերի գծով՝ 63,766,652.5 հազ. դրամ,
3. դեֆիցիտը (պակասուրդը) 50,000.0 հազ. դրամ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

Տ.ՍԱՐԳՍՅԱՆ

8554

ՀՀ **2012** ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ
ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ (ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐԻ)՝ ԸՍՏ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

N	İ ĩ³ · ĩç³ Ýİ³ ÝáðÙÁ	ŊáðÙ³ ĩÁ
1	2	3
ÀÜ,²Ø°ÜÀ êàð´ì°ÜðÆ²		6,704,948.8
	ÀÜÂ²ðÆİ êàð´ì°ÜðÆ²	6,625,724.8
1	İ³ é³ í³ ĩÙ³ ÝÙ³ ĩÙÝç å³ ĩå³ ÝáðÙ	584,922.2
2	Ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում	3,284,000.0
3	İ»ĩ·»İÝÙ³ չÉ»İİ ĩ³ İ ĩ³ Ýèåáĩİ áÍ áðÕ¨áĩ³ ÷ áË³¹ ĩÙ³ Ýİ³ é³ ÛáðÃÙáðÝ	313,500.0
4	²ĩİ³ ÛçÝ Éáðè³ ÍáĩáðÃÙ³ Ý ó³ Ýóç ß³ ĩ³ · áĩÍÙ³ Ý¨ å³ ĩå³ ÝÙ³ Ý³ ßË³ İ³ ÝÙÝ»ĩ	1,696,000.0
5	Â³ Ý·³ ĩ³ ÛçÝ İ³ é³ ÛáðÃÙáðÝÝ»ĩ¨ óáðó³ ĩ³ Ý¹»èÝ»ĩ	193,656.1
6	Կենդանաբանական այգու ցուցադրություններ	194,637.7
7	Â³ İ»ĩ³ İ³ Ý Ý»ĩİ³ Û³ óáðÙÝ»ĩ	236,016.8
8	²ĩİ³¹ åĩáó³ İ³ Ý¹ èİç³ ĩ³ İáðÃÙáðÝ	41,384.3
9	°ĩ³ Åßİ³ İ³ Ý¨³ ĩİ»èİç¹ åĩáóÝ»ĩáðÙ³½·³ ÛçÝ, ÷ áÕ³ ÛçÝ¨ É³ ĩ³ ÛçÝ Ýİ³ ·³ ĩ³ ÝÝ»ĩç · ÍáÍ áðèáðóáðÙ	81,607.7
	Î² äÆİ²È êàð´ì°ÜðÆ²	79,224.0
1	İ³ Ý³ å İ³ ĩ³ ÍÙÝ»ĩç ĩçÙÝáðÙ	79,224.0

ՑԱՆԿ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՑ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Ըստ Երևան համայնքի բյուջեի ծրագրերի

Հ/Հ	Ծրագրի անվանումը	Գումարը
1	2	3
	ԸՆԴԱՄԵՆԸ	27,018,403.6
1	Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպում	41,695.6
2	Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագիր	4,730,405.7
3	Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպում	1,767,951.1
4	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ ծրագիր	364,294.2
5	Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ ծրագիր	364,294.3
6	Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման դրամաշնորհային ծրագիր	1,994,580.1
7	Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման ծրագիր	1,994,580.2
8	Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագիր	94,171.6
9	Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրին տրամադրվող տեխնիկական աջակցության ծրագիր	3,831,058.2
10	Տարրական ընդհանուր կրթություն	4,989,094.6
11	Հիմնական ընդհանուր կրթություն	5,786,550.7
12	Միջնակարգ(լրիվ) ընդհանուր կրթություն	845,747.5
13	ՏՀակոր Կոջոյան՝ կրթահամալիր ՊՈԱԿ-ում արտադպրոցական դաստիարակության կազմակերպում	6,474.0
14	Սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպում	207,505.8

ՑԱՆԿ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ

№ 3 ½ 3 ձ 1 ձ 3 Ս

		Աղբահանության ի × 3 ձԱ / ի 3 ձ» ի 3 Յ / /բնակչություն/	Աղբահանության ի × 3 ձԱ / ի 3 ձ» ի 3 Յ / ձ 3 Յ 3 ձ 3 ի 3 Յ օբյեկտներ	2012 բյուջեում Յ 3 Է 3 ի » Յ ձ աղբահանության ի × 3 ձԱ
1	ԱԶԱՓՆՅԱԿ	200,616.0	73,949.5	274,565.5
2	ԱՎԱՆ	94,447.2	45,406.9	139,854.1
3	ԱՐԱԲԿԻՐ	250,776.0	286,808.1	537,584.1
4	ԴԱՎԹԱՇԵՆ	75,967.2	50,678.0	126,645.2
5	ԷՐԵՐՈՒՆԻ	225,432.0	210,804.2	436,236.2
6	ԿԵՆՏՐՈՆ	253,099.2	550,875.2	803,974.4
7	ՄԱԼԱԹԻԱ-ՍԵՐԱՍԻԱ	270,504.0	185,309.2	455,813.2
8	ՆՈՐ ՆՈՐՔ	266,952.0	222,506.9	489,458.9
9	ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ	22,461.6	13,369.5	35,831.1
10	ՆՈՒԲԱՐԱՇԵՆ	17,126.4	6,019.2	23,145.6
11	ՇԵՆԳԱՎԻԹ	266,731.2	441,463.5	708,194.7
12	ՔԱՆԱՔԵՆ-ԶԵՅԹՈՒՆ	151,058.4	135,504.1	286,562.5
	ԱՍԿԱՆԱԾՈՒՄ	2,095,171.2	2,222,694.3	4,317,865.5